

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:
Օտարաբարձարացի դիմում են ուղղակի
Դպրատն. Редакція „Менк“:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և օծն օրերէն):
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Ցայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Օգուտ չենք քաղում:—Ն ե ի թ ի ն տ ե ու լ թ ի լ ն: Նամակ Շուշուց: Նամակ Շամախուց: Նամակ Ս. Պետերբուրգից: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Ա թ տ ա թ ի ն տ ե ու լ թ ի լ ն: Հայոց Պատրիարքի խօսակցութիւնը: Թիֆլիս: Անգլիական թագուհու ծառը: Արեւելեան գործեր: Նամակ Պարսկաստանից:—Մշակիչ հետապնդներ:—Ցայտարարութիւններ:

ՕԳՈՒՏ ԶԵՆՔ ԳԱՂՈՒՄ

Ժողովրդի մէջ արդէն զգացվում է ընթերցանութեան պահանջը: Հայը կամենում է թէ իր հոգեւոր պահանջին մոտենալ, սուրբ գրքերը, աւետարանը կարդալով, թէ իր ընդհանուր մտաւոր զարգացմանը լըրում տալ, կարդալով ընդհանուր զարգացուցիչ գրուածներ: Բայց հայի ինտելեկտիւն, հայի հոգեւոր և մտաւոր կեանքի առաջնորդները, մինչև այժմ չեն մտածում բաւականութիւն տալ նրա ընթերցանութեան ցանկութեանը: Մինչև այժմ մենք չենք թարգմանում աշխարհաբար, հայի համար հասկանալի, մատչելի, կենդանի լեզուով աւետարանը:

Եւ ահա մենք տեսնում ենք հետեւեալը. Մարդկովկասի հայը այլ ևս չէ հասկանում գրաբար լեզուն, իսկ իրան հասկանալի լեզուով թարգմանված աւետարանն չը կայ,—և հայը ստիպված է կարդալ այդ սուրբ գիրքը օտար լեզուով, որ նրա համար աւելի հասկանալի է, քան թէ գրաբար լեզուն: Այսպիսով օգուտ չը քաղելով հայի ճգնաժամից զէպի ընթերցանութիւնը, մեր անհոգութեան պատճառով առիթ ենք տալիս որ հայոց շըրջանում հետզհետէ տարածվի օտար լեզուն:

Նոյնը և ուրիշ գրքերի հետ: Ռուսաստանում կամ արևմտեան Եւրոպայում մի նոր գիրք, մի նոր բովան, մի նոր թատրոնական գրուածք է հրատարակվում, որ ամբողջ լուսաւորված աշխարհը կարդում է: Ամեն ազգերը իսկոյն իրանց լեզուով

թարգմանում են այն գիրքը, այն բովանդակ... Միայն հայը զուրկ է մնում այդ գրքի իր մայրենի լեզուով թարգմանութիւնից: Եւ ահա, եթէ հայն էլ կամենում է հետեւել եւրոպական ընդհանուր մտաւոր շարժմանը, եթէ կամենում է կարգաւ այն նոր գիրքը, որի մասին ամբողջ Եւրոպան խօսում է, նա պետք է վեր առնի այն գիրքը բնագրի մէջ, որովհետեւ չէ գտնում նրա թարգմանութիւնը իր մայրենի լեզուով:

Այդպիսով, մեր անհոգութեան պատճառով, մենք աւելի և աւելի նպաստում ենք հայոց շրջանի մէջ օտար լեզուների տարածմանը և մեր միջին մայրենի լեզուի փոքր առ փոքր անհետանալուն...

Մենք ոչինչ չենք անում ազգի մէջ մայրենի լեզուի տարածման համար և դեռ յանդգնութիւն ունենք պարծենալ թէ ազգութիւն ենք, այն ինչ ոչինչով չենք նպաստում այն գործիչի մեր ազգի մէջ ընդունվելուն և տարրանալուն, որ ամեն ազգութեան ամենազինաւոր հիմունքն է, այսինքն մայրենի լեզուին...

Երբ այդպիսով մեր անհոգութեան և ազգութեան վրա կազմված սխալ և վնասակար գաղափարների շնորհով փոքր առ փոքր կանհետանայ հայերի մէջ նրանց մայրենի լեզուն և այդ լեզուի տեղը կը բռնի մի որ և է այլ լեզու,—այն ժամանակ հայը այլ ևս ազգութիւն չէ լինի, այլ կը լինի մի ուրիշ ազգութեանը պատկանող, թէև իր կրօնը պահպանած մի ազանգ միայն:

Ազգութիւնը, որ կորցրած է իր մայրենի լեզուն, նրան ազգութիւն ոչ որ չէ համարի, թէկուզ նա անհնախաբուրթեան զգացմունքից յափշտակվելով, ինքն իրան ազգութիւն համարի, միայն այն պատճառով, որ առանձին կրօն ունի... Բայց բոլոր մնացած ազգերը նրան միայն աղանդ կը համարեն:

Եւստրիայում և Ունգարիայում կան մինչև այժմ բաւական շատ լուսաւորչական հայեր, բայց որովհետեւ նրանք կորցրել են իրանց մայրենի լեզուն, նրանց ոչ որ չէ համարում առանձին ազգութիւն, այլ գրիգորեան աղանդին պատկանող աւստրիացիներ կամ ունգարացիներ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

10 օգոստոսի

Վերջին ժամանակներում. «Մշակում» պատահում են յաճախ նամակներ, որոնցով շատ տեղերից, մանաւանդ դաւաճական քաղաքներից և Կ. Պոլսից, յայտնում են Բաֆֆիի «Նենթը» վիպասանութիւնը առնձին գրով հրատարակելու ցանկութիւնը: Նոյնպէս և մենք բաւական ժամանակ է, որ կարդացինք նոյն իսկ հեղինակի արած առաջարկութիւնը այս առիթ, սակայն հարցնում ենք, արդե՞ր այդ առաջարկութիւնը արձագանք գտաւ մեր ազգայինների մէջ— դեռ ոչ: Բուցէ մեր տաղանդաւոր հեղինակի այդ աշխատութիւնն է կը մնայ, կը հնանայ և ժամանակի մաշող ժանիքներին զոչ կը դառնայ... Բանի բանի այդպիսի հեղինակների հմուտ գրչից դուրս եկած երեւելի աշխատութիւնները բոլորովին անպայտացան, առանց տպագրութեան մնալով, և ժամանակի սահող անիւը նրանց փոխի անգամ չը թողնեց. դեռ ևս մենք գտնաւորում ենք, որ ընթերցանութեան հարցը չունենք:

Արդարեւ, մենք բոլորովին հաւատարմ ենք, որ եթէ լինէին օգնողներ, լինէին աշխատողներ, հանգուցեալ արթ. արք-եպիսկոպոս Արքիմիտիւս Ժեռապի աշխատութիւններից շատերը առանց լոյս տեսնելու չէին մնայ և մեր ազգայինից հայ գաղափարութեան համար մի մի դարձել գուցէ կարող էին լինել, և այսօրվան օրը նրանք էջմիածնի փողիների մէջ չէին փող: Ինչո՞ւ չեղանակ, ինչո՞ւ տարիներ գուցէ աշխատած կը լինի այդ մասին, ինչո՞ւ քան զիջները գուցէ վատնած կը լինի այդ առթիւ... սակայն հանգիստ ընդ, երջանկայիշատակ սրբազան, հանգիստ ընդ հայ հեղինակ, այդքան տարիների աշխատութեան պտուղները ըս սիրած էջմիածնի մոռացութեան խաւարի մէջ պիտի ծածկէ, զրկելով հայ ազգին ըս ազնիւ աշխատութիւններից...

Մենք չենք կասկածում, որ դեռ ևս կարելի է հանգուցեալ Արքիմիտիւս, Նաղարեանցի և այդպիսի ազգային և երեւելի գիտնականների բազմաթիւ ձեռագրեր աշխատութիւններ դանազան անկիւններում թաքցնելով կը լինեն, և ի հարկէ, մընալով առանց տպագրութեան, նրանցից շատերը դուցէ կանհետանան ժամանակի ընթացքում:

Մարաբաղացիների հայ մամուլը կատարելապէս չէ ծառայում իր նպատակին: Ամբողջ տարուայ ընթացքում հազիւ թէ մի քանի հայերէն ընթերցանութեան հրէքը լոյս են տեսնում, բայց այդ դէպքում աւելի դատապարտելի է ինտելեկտիւնի, որը պէտք է աշխատէ ձեռք բերել դանազան աշխատութիւններ և տպագրել տալ: Մեր դարում հարկաւոր է դրօշը, բայց ոչ թէ լոկ խօսքով:

«Մշակը» առաջարկեց մի օտարազգի լեզուով լրագրի հրատարակել հայի ձայնը եւրոպային լսելի անելու համար և մինչև անգամ չէնք ինքը յանձն առաւ. այդ հրատարակութիւնը, միայն թէ օգնէին իրեն նիթականաւէս: Կը յուսամք և սպասում

ենք: Բայց կարելի է, որ շատերը դեռ ևս սպասում են, որ պ. Արծրունին այդ էլ իր ծախքով, իր աշխատութեամբ հրատարակել տայ: Զարմանալի էլ չէ. ամեն մի հայ, երբ մի առաջարկութիւն է անում, առաջ ինքն պէտք է յանձն առնի նրա իրադրո՞նքը, որ ուրիշները չեստեն... հայի համար ամեն ինչ պարտաւոր պիտի լինի... առանց այն էլ «Մշակը» արեց այն, ինչ որ շատերու պարտքն էր:

Մի խօսք էլ մեր դաւաճական հայ մամուլին: Աչքի առաջ ունենալով չէնք Շուշիի տպարանը, պէտք է ասած, որ նա երեք տարիների ընթացքում միայն մի «Գրեպի» թարգմանութիւնը տպագրեց, մնացեալ ժամանակները նա միշտ պարպել է տոմսակներ և այդպիսի թղթեր ապագրելով, նոյնպէս և Գանձակից: Բայց միջին նրանք չէին կարող առնել «Մշակից» կամ մի ուրիշ լրագրից վէպեր, և ուրիշ բանաստեղծական յօդուածներ,— ինչպէս «Նենթը», «Չալալէղիները»... և տպագրել առանձին հրէքով: Այդ մի մեծ ծախք չէր պահանջի, մանաւանդ, որ մեծ քանակութեամբ կարելի էր ծախել և մինչև անգամ փող վաւստակել:

Համառօտում ենք մեր նամակը, շատ բաներ կայ գրելու, սակայն il ne faut pas tout dire.

Ա. Գ. Ապրեսեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

27 օգոստոսի

Արդարեւ յանդիմանութեան արժանի է այն մարդը, որ իր եղբոր որ և իցէ պակասութեան վրա կուրախանայ ու կը ծիծաղի, որ ազգի և որ եկեղեցու անդամ էլ լինի նա: Սա հասկանալի է, որ երբ մի լուսաւորչական բողոքական կամ կաթօլիկ է դառնում, չէ հաւանում լուսաւորչական եկեղեցու դաւանութիւնը, երբ մի բողոքական լուսաւորչական կամ կաթօլիկ է դառնում, չէ հաւանում բողոքականութիւնը: Բայց սա իրաւունք չէ տալիս մեզ ծախել ուրիշի դաւանութիւնը, երբ նա մեր համոզմունքին հակառակ է: Ուրիշի պակասութեան վրա խօսելը նրան ուղղելու նպատակաւ, ոչ թէ արգելված չէ, այլ և մեր օրթական պարտականութիւն է, միայն թէ ատելութեան և ծաղրաբանութեան հորով չը վերաբերվինք դէպի որ և իցէ անձնի կամ եկեղեցու պակասութիւնները, որ մի գուցէ յօժըր շտկելու տեղ աչքն էլ կուրացնենք: Հին ժամանակի հետո՞ք միայն չէին անհոգի դարձած քրիստոնեաները պահելով իրանց չին աւանդութիւնները, խտրութիւն էին դնում կերակուրների մէջ և պահում էին ոմանք օր օրի վրա և ոմանք ամեն օր, իսկ չեթանոններից դարձաները ուտում էին անխափ ամեն բան և չէին պահում, վասն որոյ մինը նախատում էր միւսին թէ ինչու են ուտում, իսկ միւսը նրան ինչու չեն ուտում, ինչո՞ւ են պահում: և այսպէս ատելով և ծաղրելով իրար համոզմունքը, մինը միւսի պատւին դիպում էր և զայրացնում նրան: Պոռոս առաքեալը լսելով դոցա անմիաբանութիւնը և յայտնի տեսնելով այն վտանգը, որ առաջ պիտի դար նորանցից, որով և ինքը պիտի խոր վշտանար, տեսնելով Քրիստոսի մի եկեղեցին երկուսի բաժանված այդպիսի մի հնչիւն բանի համար, վասն որոյ նա իր հոգեկանից ըմբռնեց իրար հետեւ տարբեր համոզմունքների համար, անելով չնա որ ուտում է թող չանարդէ նրան որ չէ ուտում, և նա որ չէ ուտում, թող չանարդէ նրան, որ ուտում է, ինչու որ Աստուած նրան ընդունում է, այսինքն Աստուած ընդունում է զուտողը և չուտողը: Սորապէս գործել փաստելով այդ վրիժի մէջ առաջնալը աշխատում է ցոյց տալ, որ Աստուծու առաջ ուտելու և չուտելու մի նշանակութիւն չունեն, միայն թէ քրիստոնեայ եղբարք, տարբեր համոզմունքների համար իրար չը թշնամանալին, այլ իրար ներողալիտ լինին միմեկին որ տկար կողմը զօրանայ և կատարեալ դի-

գութնան հասնէ։ Ուրեմն ամեն միւր չեղեցում իր համոզմունքին և ազատ խղճմանը մնայ մի և նոյն եկեղեցու մէջ, որի գլուխն Քրիստոսն է և ամեն մի քրիստոնեայի համար նոյնը։ Նմէ առաքելաբար այսօր տեսնէր Քրիստոսի մի եկեղեցին հազար և միւր բաժանված և ցաւալին է մի եկեղեցին միւրին առեկալ և միւրն անորմ ամբողջութեան իւր շուրջը կարգալիս, պիտի դառնար արտառուշտով լայ լինէր և անէր։ «Միթէ մենք քրիստոնէական շատ քրիստոնէներ և շատ աստուածներ ունենա, այնպէս որ ամեն մի եկեղեցի մի ջուկ Քրիստոսն է պաշտօնում։ Միթէ չենք կարող մնայ մի և նոյն եկեղեցու մէջ և ունենալ ամեն միւր իր համոզմունքը, ինչպէս արին Հռոմ լոյսով փող վերադնալ քրիստոնէականը»։ Գարնաւալին սա է, որ այժմ գտնէ մի ազգութիւն էլ չէ կարող մի միմեկին եկեղեցի։ Աւելի դժուար էր այն ժամանակ չէրից և ազգով հոգեմայեցի քրիստոնէականների համար տարբեր համոզմունքով մի և նոյն եկեղեցու մէջ մնալ, պատկանելով զանազան ազգութիւն, քան թէ այսօր մի ազգի համոզմունքով տարբեր անդամների համար, որը աւելի լուսաւորված է քան թէ այն ժամանակվայ ազգերը։ Հիմա կը հարցնէ՛ր ապա ինչու շատերը իրանց համոզմունքը փոխում են, ասելովում են կամ մի նոր եկեղեցի կազմելու, կամ թէ որիչն ճոյր անցնել։ Սրա պատճառները երկու են։ Նախ հզօնոր հոմալները իրանց չափի փրկութեանը վերաբերեալ անհզօնութիւնը, որ կապով Քրիստոսի ոչխարները չոր և ցամաք քարի վրա, չեն կամենում արածացնել նրանց անտարաքի մարդկայնութիւնը, լայն ինչ որ վերաբերում է նրանց բարբիւր խաղաղութեան և կարելի կը լինէր, որանց մէջ ծիր են և արի, այդ հոգեւորութիւնը իրանց համար աշխատանք դուռն շինած վարձկաններ են և անտարբեր դէպք իրանց սուրբ պարտականութիւնը, իսկ երբ մի խեղճը այդ չափի մէջ գտնուի իր հոգեւոր սուրբ, ստիպում է ինքը իր համար սուրբ գրքի մէջ ճարակ որոնել, այն ժամանակ բարկանում են վարձկան հոգեւորներ և հազար ու մի տեսակ հնարներ գործ են դնում իրանց կարծիքով իրանց մտքերով ոչխար լինել մարդկայնութիւն վեր առնել և կրկին այն առաւելայ չոր և ցամաք տեղը բերել և կապել, որ ճշտու կատարեն իրանց վրա այն ասածը, թէ «իսկանք չեն մտնում Սատուած թագաւորութիւնը և ուրիշներ էլ չեն թողնում մտնելու»։ Միւս պատճառն եկեղեցու մեծամասնութիւնից կրած հալածանքն է, որ ստիպում է նրանց հեռանալ իրանց մայրենի եկեղեցուց։

Ով որ լսէ Տաւադու հայ-աւետարանականների կենսագրութիւնը, նա պարզ կը տեսնէ այդ երկու պատճառները, որ ստիպելին նրանց օտար եկեղեցու դիրքը դնելու։ Բայց թէ բողոքական հալածանքը մարմնաւոր շահերի կամ քաղաքականութեան համար են կրօնափոխ լինում, ինչպէս կարող ենք երբեմն լրագրիւնների մէջ, սա անխորհրդաւորութիւն է։ Ճշմարիտ է անտարաքական հայերն քանի որ լուսաւորական եկեղեցու մէջ էին գտնուում, անտարբեր էին դէպք իրանց հոգեւորականները, վարձապետները, և չենց իսկ աղքատները, այսինքն անհոգ էին նրանց պիտոյնները իր համար, բայց այսօր նրանք անտարաքական են դէպք իրանց հոգեւորականները, ուսուցիչներն ու աղքատները, բուն իսկ իրանց քակից, առաջ մի լուսայ չը տուողն այժմ մեծ զոհաբերութիւն է անում այդ նպատակի համար։ Ինչ է այդ մեծ զոհաբերութեան պատճառն մի և նոյն անձերի մէջ, պիտի ասեմ, որ նա Սատուած խաղաղ կենդանի քարոզութիւն է, որ կապաւորում է քաղաքացի արտերի, գլխավոր և սղորմած է շինում անդուծել, անտարաքական է շինում ժառոց և ճանաչացնում ամեն մի քրիստոնեային իր սուրբ պարտականութիւնը։ «Որում հարկ հարկ, որում պատիւ պատիւ»։ Քրիստոսը իր մի առաւելում եկեղեցին նշանակեցնում է ծովի, ուր կան շատ լաւ և վատ ձկներ, այնպէս էլ եկեղեցին և կան այսօր եկեղեցու մէջ լաւ և վատ քրիստոնեաներ, ուստի երբ տեսնում մի հայ բողոքական կամ կաթոլիկ ծաղրում է լուսաւորական եկեղեցին, ուրախանում է և թեթեւաբար ծիծաղում նրա հոգեւորականների պակասութեան վրա, կամ մի լուսաւորական ասում է և հալածում մի հայ բողոքական կամ կաթոլիկ նրա տարբեր կրօնական համոզմունքների համար, մի զարմանար, սա ընկան է, ասանց այդպիսիների անկարելի է եկեղեցի լինել այս յանցաւոր տան մէջ, երկրաշնորհ վրա, վրայն թէ մի վտանգից դուրջացնել որ «թաղը չորի կապով շարունակ» միւր լանցանքը բոլորին չը վերաբերէր, իմացած չենք որ այդպիսիք Քրիստոսի եկեղեցու միջին լիւսանդաններն են, որ նրա արտօնութեան մասն և բաժին չունեն, դանք թէ և քրիստոնեայ էլ կոչվէին,

այսու ամենայնիւ Քրիստոսի հոգեւոր գործի են, քանզի եթէ նրանք ողորմածանքով ստանալու հոգի ունենային, եղբոր կամ ուրիշ եկեղեցու պակասութեան վրա չէին ծիծաղել, այլ լայ կը լինէին, ինչպէս հայաւոր, այլ ներսդաւիտ կը լինէին։ Մի լուսաւորական հայտնում և հալածում է մի բողոքական կամ կաթոլիկ հայ նրա կրօնափոխութեան համար, կարծելով որ սուրբում եկեղեցու մեծ օգուտ տուած է և Սատուած էլ հաւանում է նրա արածը, լայն չէ մտածում, որ Սատուած հայտնի է և հալածողի բարկում չէ, մի այդպիսի պարտուող նրա առաջն պիտի է և զգուցել։ Մի հայ-բողոքական էլ կիսատ արատ լինելով Սատուած խաղաղ կազմում է իր համար մի տեսակ համոզմունք այն է «մի մտնենք, մի դիպչին, համար մի առնին»։ Ինչպէս թէ մի խեղճ գիւղական պառաւ կին պառ չորեքշաբթի կամ ուրբաթ օրը յանկարծ անդիտութեամբ պանրի կտորը բերանը դնէ, յետոյ տան անգամ ասիտուն իր պառ ուսկուն համար, լայն մի և նոյն ժամանակ առանց խղճմանների խայկոցի միւրն արտիցն ուղի դուրսնալ, միւրն ցանքը քանդէ, որ կրակ անէ, եթէ ուստի և իր Սատուած համար հաճելի պէտք պահէ, Այդպէս էլ դու ես, բողոքական եղբայ, երբ ուրիշ դարձրել ես քրիստոնեականութեան դրսի մանր մուրը բաների վրա և նա որ ամենաշարկաւորն է դանց ես անում, դրսի ինքն իրան անմեղ բաներից քեզ դրկում ես, բայց ծաղր անելը, քեզ ուրիշից ասելի արդար, բանիմաց կարծելը և սրանց չես էլ որիշ կոպիտ արատներ մեղք չես համարում, այն ժամանակ քանում ես և ուղտերն կանում, Հենց ձեր պէններն են, որ հայ-բողոքականների մեծամասնութեան անունը ուրիշների առաջն վար են դառնում և ձեր պէններն են, որանց համար այսօր յանդիմանութիւն են տեսնում և ամօթ կրում։ Կտւում ենք, թէ և աղք չեն տեսել, որ եղել են անհաշտներ հայ-բողոքականներից, որանց իրանց մօտ ազգականի կամ սիրելի բարեկամի դժգոհը լուսաւորական եկեղեցու մէջ դրած ժամանակ չեն կապել նրան մտնել իրանց սիրելի լուսաւորականութեան վերջի պարտքը կատարելու։ Երկի դուք մտածում էք, բողոքական եղբայրներ, որ այնտեղ շատ բաներ կան, որոնք ձեր խղճին և համոզմունքին դէմ են, վաճառելով այնտեղ մտնելու քրիստոնէականութեան վրա էք համարում, ես տեսնում եմ, որ դուք ձեր խղճի գերին էք, ուստի ձեզ յանդիմանելու փոխարեն հարկաւոր է ցաւել և խղճալ ձեզ վրա, քանզի դուք հասկացողութեան մէջ շատ տկար էք և անտարաքի գիտութեանց էլ դուրի Սաք խղճում, դուք այնքան լաւ քրիստոնեա դարձաք, որ Քրիստոսին էլ մի քանի քալ անցաք, որը իր սրբութեանը պակասութիւն չը համարեց, ինչպէս տեսնում ենք նրան տան և երկու տարեկան հասակում և յետոյ էլ, անկողնապաշտութիւնով լիքը հրէից տաճարի մէջ նստած և մեղաւորների չես քաղցրութեամբ, մարդասիրութեամբ խօսելիս։ Տեսէք և առաքելականներն, որանք ոչ թէ միայն ինչպիսի տաճարն էին մտնում, այլ լուսաւորականներն անգամ։ Սա յուսով եմ թէ լուսաւորական, թէ բողոքական և թէ կաթոլիկ հալածողներն այնքան պակասութիւն չը վրդովնել և արտերն իրարից յետ չը պահեն և միմի պակասութիւնը տեսնելով եկեղեցու մեծամասնութեան վրա վատ դատարարներ չը կազմեն, որ մի գտնէ մեր վրա կատարվի այն առածը թէ «հայրենի աղբիւս կիսան, իսկ որդիներն առաւմենն տառաւ»։ Սա, ինչպէս Մշակ լրագրի այս տարեւալ 135 համարում բանասիրական մասին մէջ գետնադած յօդուածին մէջ գրած եմ, նոյնը կրկնում եմ և այստեղ, որ մեր ազգը տակաւին զարգացած չէ, կամ լաւ է ասել չգրի մեծամասնութիւնը դուրի է լուսաւորութիւնից, վաճառելով ազգին մէջ բարոյականապէս չը զարգացանքներից միջո պակասութիւն սպասել կարելի է, որ դաւանութեան էլ պատկանէին նրանք։ Աստի որքան ազգի մեծամասնութեան կրթութիւնը ուղանում է, աչքերն էլ աչքաւաւան հայ եղբայրների միութիւնը յետաձգում է։ Սա է, որի վրա ազգի մէջ գտնուող բանականները, նրա օգուտը որոնող և ապագայ սերունդի երջանկութիւնը իրանց աչքի առաջ ունենցողները մի առանձին ուղարկութիւն պիտի դարձնեն։ Մեր գաւառներին պէտք է դատարարակէ ոչ թէ չեն և փառած դատարարներով, իմաստաւ կամ անբարոյական վարձապետների ձեռով, այլ բարեբար, լուսաւորական և ֆանատիկոսութիւնից ազատ ուսուցիչների ձեռով, որ հաստատ չինն դնվի այն նախաձեռնի միութեանը, որին յուսով ենք պիտի արժանանայ մեր ապագայ սերունդը։

Ե. Փրկուղիւն

ՆԱԽԱԿ Ս. ՊԵՏԵՐՈՒԲԵՐԻՅ

Յ սեպտեմբերի
«Մշակը» շատ անգամ է յայտնել այն ցաւալի իրողութիւնը, որ մեր մէջ, եթէ մի լրագիր մի նոր միտք է յայտնում, մի նոր առաջարկութիւն է անում, ցանկանալով, որ այդ միտքը իրագործվի, այդ ժամանակ հարկաւոր է, որ խմբագիրը կամ նորա աշխատակիցներից մէկը, իրանք առաջ ընկնեն և անձամբ օրինակ տան ուրիշներին, որ նրանք էլ տեղից շարժվեն և մի բան կատարեն։
Այսպիսի աններկի անտարբերութիւն դէպքի նոր մտքեր էլ մի կերպ հասկանալի կը լինէր, եթէ նա նշմարվէր միայն անուր, անկիրթ մարդիկների և մողովրդի խաւար դասակարգերի մէջ։ Բայց ցաւալին այն է, որ նոյնը պատահում է և մեր ինտելիգենցիայի և գլխաւորապէս ուսանողների մէջ։ «Մշակ» լրագիրը նախ խմբագրի բերանով, յետոյ իր աշխատակից պ. պ. Մէլքոնցի և Գր. Նիկողոսեանի յօդուածներով քանիցս անգամ յանդիմանեց հայ ուսանողներին, որ անցնելով իրանց պարտաւ ժամերը թղթախաղի և զանազան զուարճութիւնների մէջ, նրանք չեն ուղում մի բուսկ անգամ իրանց ժամանակից զոհել ազգի օգուտին։ Պ. Մէլքոնցիին կծու, բայց միանգամայն խաւար խօսքերից Վոսկիայի ուսանողները այնպիսի նեղազան, որ քիչ էր մնացել իրանց ընկերներից մի խումբ ուղարկելին Փիֆլիս պատուելի զննչականին նախառարկելու համար... Վերջ ի վերջս ինչ երեաց, այդ ուսանողները իրանք արդարացիւն բոլորը, ինչ որ գրված էր նրանց մասին։ Որովհետեւ այն ժամանակ, երբ եւրօպական պիտութիւնները հաւաքւում էին ծանոցապի տունը Բ. Դրան և երբ հայոց հարցը յետ մնալով, միանգամայն մոռացութեան մէջ պիտի ընկնէր, ծագւած և կատարներ յարեցանելով մեր դէմ օտարների կողմից, այդ ժամանակ մի ուսանող չը գտնվեցաւ, որ գտնէ մամուլի մէջ հայոց դատը պաշտպանէ։ Դարձեալ «Մշակի խմբագրութիւնը» ուղարկեց իր տաղանդաւոր աշխատակցին *—ին Ս. Պետրեբուրգ, որը այստեղ ուսու լրագրիւնների մէջ անախալիցելով, մեծ լոյս տեղեց հայերի և չեւտեալան հայկական խնդրի վրա, որը ուսանողներին համար բաւական միտքութեան մէջ էր։ Մինչև այդ ժամանակ հայ ուսանողները ինչ էին չինում, ինչու չը մտածեցին այդ մասին։ Եթէ իրանք գրելու շնորք չունէին, գտնէ թարգմանութիւններ անէին հայ լրագրիւններից։ Այս իրանց աչքերով տեսան, որ մի մարդու շնորհիւ, փոքր ժամանակ վայ մէջ, ուսու մամուլը իր կարծիքը փոխեց հայերի վերաբերութեամբ, սկսվեցան ասելի նպատաւոր յօդուածներ տպելի, այն ես այնպիսի ուսու թղթերի մէջ, որոնք հայոց վրա խօսելիս միշտ ստուշութեամբ էին վերաբերվում։ Հիմա այդ լրագրիւնները ամբողջ անաշտոյղով յօդուածներ են նուիրում հայոց պաշտպանութեան համար։ Ի հարկէ ես չեմ խօսում «ԵՐԵՎԱՆ»-ի մասին, որը միշտ համակրել է հայերին։ Տեսնաք, պարուն ուսանողներ, թէ ինչ կարող է անել մի հաստ մարդ մի երկու ամսվայ ընթացքում։ Այժմ թող թող արվի մեղ հարցնել ինչու այդ կարեւոր բանը չէին անում և հիմա էլ չեն անում 500 ուսանողները, որոնք թափված են Ռուսաստանի զանազան համալսարաններում։ Չէ որ նրանք երեսուն տարեց ասել է վստում են զբերել մէջ էլ որ ժամանակի համար է պահված նրանց գիտութիւնը։ Մասնաւոր Վոսկիայի 150 ուսանողների մէջ սակաւաթիւ են այն երիտասարդները, որոնք գտնէ հայոց լրագրիւններից թարգմանէին և օտարներին մեղ հետ ծանօթացնէին։ Ինչու ուրեմն նրանք այնչափ վերաւորվում են, երբ նրանց աչքին ասում են դառն ճշմարտութիւնը։ Հայ ուսանողը չէնց որ համալսարան մը աւ, միայն խօսել, ուսել, իրել գիտէ և անտաների առաջ իրան գիտական ձևացել է, իսկ մի կարեւոր և ծանր գործի մէջ նա ձեռքը ծոցը կը դնէ ու կը լռէ։ Եւ, ինչ կղաւ եղաւ, եթէ մինչև այսօր հայ ուսանողները ընած են եղել և չեն ճանաչել իրանց պարտաւորութիւնը, գտնէ այսուհետ նրանք թող քանեն իրանց չին մեղքերը... Թող ուսանողները սկսեն դործել, մասնաւոր որ լսում ենք թէ «Մշակի» համակրելի աշխատակիցը մտադիր է շուտով թողնել Ս. Պետրեբուրգը։ Նա հարկեց ձեր առջև, պ. պ. ուսանողներ, ճանապարհը, իսկ դուք ճեւեղեցէ...
Խ. Միլեանց

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Փիֆլիս, 5 սեպտեմբերի
Կարգալով «Մշակի» 144 և 150 համարներում

Քաղաքիս ս. Կարապետ և Բեթղէսեմ թաղերի անմարդկութեան մասին, ես ես պարտք համարեցի այս քանի մի շարք նամակով քաղաքային վարչութեան ուղարկութիւնը դարձնել և Չուղարկելի Նիկոլայիսկայա կոչված փողոցի անմարդկութեան վրա։
Վերադառնալ փողոցը իր մեծութեամբ Չուղարկելի ամենաառաջին փողոցը լինելով, իր կեղտոտութեամբ և յաճախակի պատահող աւաղակութիւններով ես նշանաւոր է։
Այս թէ ինչու...
Գտնէ դեռ «Մշակի» ընթերցողները ինչիս լինան մայրաքաղաքի զեղեղից Վարենին տան առաջ անմարդկութեան խողովակի քանդակը և նոյն տեղում մի ուսու հիւանդ խեղդիլը, ահա մինչև այս օրն էլ այդ խողովակը նոյն դուռնեան մէջ է մընում և դեռ ամեն անգամ անձրև գալու ժամանակ ասելի ես մեծանում է։ Այդ պատահաւորաբար պատճառով վերադառնալ փողոցը կատարեալ աղբանոց և հասարակաց արտաքնոց է դառնել։ Ինչու ասես չեն անում աղբուղի ստանալ միմեկին, կատարեալ սկսած մինչև ստանալ շուն կը ճարվի այդ պատահաւորաբար։ Գտնով դրանցից առաջացած զարշառուտութեանը ես լսում եմ ինչ օգուտ, որ քաղաքիս սպանդանոցը Նալիկովն են տեղափոխել։ Թէ և երբեմն երբեմն, ժամանակաւորապէս աղբաւորում ենք այդ զարշառուտութիւնից այդ լինում է բնութեան շնորհիւ, այն է յորդ անձրևներից առաջացած զեղեղներից, որ երբեմն մարդու են վերադառնալ փողոց աղտեղութիւններից։ Բայց այդ ես արժան չէ նստում մեղ, որովհետեւ վերջին անձրևից դուրսացած զեղեղին դարձեալ մի Տ տարեկան երեխայ պիտի դռնվի, եթէ փոքր ինչ ուշ էին հասնել օգնութեան։
Վերը յիշեցի, որ այս փողոցը գողութիւնից ես զուրկ չէ։ Սյր, այդ հաստատվում է նրանով, որ մի ամսուայ մէջ նոյն փողոցում մի տուն, մի մըրգաւթաճառի և մի մանրուղի ծախողի խանութ կողողալուցան։ Պատճառն այն էր, որ ցերեկով այդ փողոցում կարելի է տեսնել տանից ասելի թաւառող տանապետներ, բայց դիմելով ոչ մէկին չես գտնի։ Չը գիտեմ արդեօք ինչին վերաբերել այդ...
Նամակ վերջացնելու վրա էի, երբ նկատեցի մի բողիկ մէջ մի թուրք խոհարարի խանութը մարդկիւններով լցվեցաւ, տօնա ու փառի պղնձները դարկում էին օդնութիւն կանչող խոհարարի գլխին և խանութի մէջ գտնված կարասիները շարունակ էին, իսկ մէկն էլ խանջալ ձեռքին սպառնալիք էր կարգում։ Այդ վերջինն էր մի երիտասարդ վրացի տանապետ, որ մի կողարդաւոր չէր ինտելիգենցիա խոհարարի խանութում լաւ ճանաչուց ու խմբուց յետոյ, կամենում էին առանց կողքի վճարելու հեռանալ։
Գր. Խօջամիրեան

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Սանահին, 20 օգոստոսի
Սանահին կից Որեակ գիւղի բնակիչները շատ վաղուց գրված էին պարտ մարդու և առատ ջրից, ունէին մի փոքրիկ առուակ, որ ամառը գըրեթէ ցամաքում էր շրջից, իսկ ձմեռը փակվում էր ջրի ընթացքը։ Որեակայ բնակիչների բաղկից 1876 թվին եկաւ ինձ տեսութիւն իմ մօրեղբոր աղջկիւր Լօրիս-Մէլքիսեան Սանահայ կոչու և տեսնելով գիւղացուց այս թշուաւ դրութիւնը, կամեցաւ օգնել նրանց։ Ուստի գիւղից 250 սանձն հեռաւորութիւնից ջուր բերել առաւ, գիւղի մէջ ինել տուաւ մի աւաղան ջրային խողովակներով, որից օգտվում են թէ մարդիկ և թէ անասունք և շինութեան վերահսկողութիւնը յանձնեց ինձ։ Այդ բերել ձակաւորի դրուած է իր յիշատակը։
Պատուական լրագրիւր միջոցաւ բարեհաճեցէք գիւղի բնակիչներին շնորհակալութիւնը մատուցանել հաղապարհաւ ինչպիսի բարեգործ կուսին ի քաղաքիւրիւն։
Իշխանուհի Քալինկայ Արդուկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի օր ուղարկեցինք Կ. Պոլսի պ. Խոսեանեանին ձեռքով 900 բուրք, որ հաւաքւած էր մեղ մօտ յօդու «Արարատեան» ընկերութեան։ Այդ գումարը այժմ կը յատկացվի Կ. Պոլսի նոր կազմված «Միացեալ ընկերութեան»։
ՇՈՒՇՈՒՑ մեղ գրում են, որ մի հախաճաւ պատանի հրացանով սպանեց իր հօրը, որը հալաւա

կում էր որդու կամքին: Ասում են, որ սպանվածը իր պատանեկութեան հասակում նոյնպէս է վարվել իր հօր հետ: Սուրբ հետեւեալը:

Սեղ գրում են ՇՈՒՇՈՒՑ, որ քաղաքից ոչ այնքան հեռու գտնվեցաւ մի հայ երկտասարդի դիակը, որին սպանել և քարաժայռից ցած էին գլորել: Չարագործները յայտնի չեն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԵՏԻՄԱՐԻ ԽՕՍԱԿՈՒԹԻՒՆԸ

«Новое Время» լրագրի թղթակիցը գրում է Կ. Պոլսից հետեւեալը:

Մի քանի օր սրանից առաջ հայոց պատերազմը ներքին Գոշերի մօտ էր և ասաց նրանք բառ առ բառ հետեւեալը:

Վախենում եմ, որ նշանաւոր քաղաքական աշխատանքները Չերնոօրիայի և Յուսասանի վերաբերութեամբ մոտացնել տան անդլիական քաղաքագետներին հայկական խնդրին:

Գոշեն պատասխանեց. «Կարող եմ ձեզ հաւատացնել, որ հայերը չ'ուղացված չեն լինի: Նրանցով շատ են դրադում և հասկերը սպանելով ոչինչ չեն կորցնում, որովհետեւ վնասված է բարեկալի նրանց վիճակը:

Հայոց պատերազմը վերադառնալով այդ տեսութեանց, ասաց իր բարեկամներին, որ այն ժամանակից, ինչ նա գործ ունի քաղաքագետներին հետ, նրանցից ոչ մէկը պատերազմի հետ այդպէս բաց և հանգստացնող կերպով չէ խօսել: Հայերը իսկայն աշխատեցին պատուաւոր ընդունելութիւն առնել Երզրումի անդլիական հիւպատոս մայոր Տրօտտըրին: Նրան ճաշերի էին հրաւիրում և առհասարակ որքան կայող էին պատուում էին: Տրօտտըրը այցելեց հայոց պատերազմին և նրանց մէջ հետեւեալ խօսակցութիւնը պատահեց:

Տրօտտըր. Նա տեսայ Գոշերի մօտ պատերազմաբանից դեսպաններին յանձնած ստաւոսիկներ: Նա ինքն թուանշաններ էի հաւաքում և գտնում եմ, որ ձեր աշխատանքը համեմատ է իմ աշխատանքին, այնուամենայնիւ ձեր թուանշաններից մի քանիսը ինձ երևում են իսկականից մեծ, միւսները փոքր:

Հայոց պատերազմ. Ստաւոսիկներ կաղ մեղու ժամանակ մենք աշխատում էինք հայ ազգաբնակչութեան թիւը փոքրացնել և մահմադարեան ընդմէջ ցոյց տալ:

Տրօտտըր. Նա այցելեց Փոքր-Ասիայի գրեթէ բոլոր սեղերը: Իմ փորձառութեանց ես հաւատացած էի, որ ամեն տեղ լաւ ընդունելութիւն կը գտնեմ: Որտեղ ես գտնում էի, ազգաբնակչութիւնը ինձ ապրիս էր բողբոջում: Վարչութեան և բարձր դասի հալածանքների դէմ: Մի տեղ չը կար, որ այդպիսի բողբոջողը չը տային: Իմ կարծիքով Փոքր-Ասիայի վարչութիւնը պէտք է ապակենսարեւնացնել ամենամեծ չափերով:

Հայոց պատերազմ. Աւելի լաւ չի լինի, եթէ մենք անդլիայի գլխաւոր-նահանգապետ ունենանք:

Տրօտտըր. Ձեւ կարծում, որ այդ միտքը զործնական լինի, որովհետեւ Ռուսաստանը չի համաձայնի այդ առաջարկութեան հետ:

Պատերազմ. Իսկ եթէ մենք հայ զորաւոր-նահանգապետ ընտրեինք:

Տրօտտըր. Սյգ միտքն էլ վիճելի է: Առաջինը դժուար է համոզել Բ. Կրանը երկրորդ, եթէ մինչև անգամ նա ստիպված լինի համաձայնել անդադար կընդդիմողի հայ նահանգապետին, բացի այդ զույգ:

Թիւրքերը չեն կամենայ նրան հպատակվել Պատերազմ. Ինչ կարծիքի էք հայերի մասին:

Տրօտտըր. Նա նրանց չափազանց գործունայ և առաջադիմութեան հոգեւոր զորութեան ցեղ եմ համարում: Իմ ճանապարհորդութիւնների ժամանակ ես տեսել եմ ահազին հոգեւոր մշակող հայերին, մինչդեռ քիւրդերը մի կտոր, միայն ապրելու համար բաւականացուցել հող են մշակում: Մի անգամ դրսեւանել ես խօսեցի քիւրդ գիւղացու հետ և նա ինձ ասաց. «Մենք բաւականաճանաչում ենք նրանով, ինչ որ անհրաժեշտ է, մինչդեռ հայերը իրանց դաշտերի շուրջը եղած բոլոր հողերը մշակում են, որպէս զի պարսպ չը մնան: Քիւրդը այդպիսի վկայութիւնը հարմարեց ինձ: Զարգացման կողմից ոչինչ համեմատութիւն չը կայ քիւրդերի և հայերի մէջ: Ես քիւրդի ոչ մի ուսումնարան չը տեսայ, մինչդեռ հայերը ամեն տեղ ուսումնարաններ ունեն: Ես բոլորը չը տեսայ, բայց մի քանիսին այցելեցի: Տեսայ նոյնպէս և թիւրքաց ուսումնարաններ, որտեղ երեխաները սովորում են գրել և կարդալ երգելով: Համեմատելով հայոց ուսումնարանները թիւրքաց կուշիների հետ, ես գտնում եմ, որ առաջինները անհամեմատ բարձր են: Բացի այդ հայերը սովորելու մեծ ցանկութիւն ունեն, իսկ քիւրդերը ոչ:

Տրօտտըր, հետանալով պատրիարքից, խոստացաւ նրան իր հետախաւազութիւնների հետեւանքները յայտնել անդլիական կառավարութեանը:

ԹԻՒՐԻԱ

Լուր կը տրուի մեզ թէ Ստաւադարէն և շրջակայնէն բազմաթիւ Հայ-Քողբաւան և քանի մը Լուսաւորչական ընտանիք դաւադին անապահով վիճակին ստիպեալ, որ կրօնի թէ հեռագրեալ կը ծանրանայ երբ Պաթումին նորանոր Խլամ գաղթականաց դաւադումը, որոշեր են Ամերիկայի Միացեալ-Նահանգները գաղթել և այս նպատակաւ իրենց կողմանէ քանի մը անձինք բանակցութեան մտեր են Նիւ-Յորքի գաղթականաց ընկերութեան մը հետ, որ պէս զի ծանրու ծախքը կանխաւ վճարուի իրենց: Նոյն ընկերութիւնն ասկէ առաջ ուրիշ Հայ ընտանեաց ալ Ամերիկա գաղթականութիւնը գլխացնելու համար պէտք եղած միջոցները առած էր: Այս առթիւ Ամերիկայի լրագրից բանք հրատարակուած թիւները ընելով, փափաք կը յայտնեն որ այժմ ալ գլխութիւն տրուի Հայոց Ամերիկայ գաղթելու, որովհետեւ, կըսեն, Հայք խաղաղ և աշխատասէր են, և Ամերիկա անոնց և անոնք Ամերիկայի դեբաւ կրնան յաւաքել: Այս նկատմամբ մեր գիտողութիւններն առանձին յօդուածով պիտի յայտնեմք:

Կը լսեմք թէ Քաղաքական Անտոն անուն վարդապետն, որ պապականութենէ Հայաստանեայց եկեղեցին եկած և իւր անկարգ վարմունքով յարգ չըր գտած ազգին առջև, ժամանակ մը Ռումանիոյ մէջ թափառելէ յետոյ, վերջերս Փոքրան քաղաքին մէջ եկեղեցականութիւնն ալ մէկդի թողլով Կալացի Բաղրական թատրոնին մէջ գերտաւնութիւն ընել սկսել է:

(Մասիս)

ԱՆԳԼԱՅԱՆ ԹԱԳՈՒՅՈՒՆ ԳԱՅԱՄԱՆ ՃԱՌԻ

Անգլիական թաղուհու գահական ճառի մէջ ի միջի այլոց ասված է հետեւեալը:

Պարսկներ, ուրախութեամբ վերցնում եմ ձեզանից ձեր աշխատանքների ծանրու-

թիւնը: Օտար պետութիւններից ես անդադար խաղաղ տեղեկութիւններ եմ ստանում: Որովհետեւ Բ. Կրանը հրաժարվեցաւ կառավարել իր վրա արած պարտաւորութիւնը չերեօգորիական սահմանները ուղղելու վերաբերութեամբ, գործը մի փոքր երկարացաւ և Բերլինի դաշնադիրը կառավարչապետ խաղաղութեամբ չէ: Դաշնադիրը ստորագրող պետութիւնները յայտնեցին Բ. Կրանը իրանց կարծիքները այն միջոցների վերաբերութեամբ, որոնք անհրաժեշտ են չերնոօգորիական հարցը վճարելու, Եւրոպական թիւրքի վարչութիւնը կազմակերպելու և Հայաստանի մէջ գլխաւոր վերանորոգութիւնները միջոցելու համար: Ես յոյս ունեմ, որ մենք կը հասնենք նպատակին եւ Եւրոպական համաձայնութեան շնորհիւ, որ արեւելեան հարցի վերաբերութեամբ մինչև այժմ պահպանվել է: Կրան նպատակ է նոյնպէս և այն ձևով, որ գործում են Բ. Կրան վրա Բերլինի դաշնադիրը ստորագրող պետութիւնները, որպէս զի կարողանան ստիպել թիւրքաց կառավարութեանը գործադրել այն միջոցները, որոնք անհրաժեշտ են Արեւելքի մէջ հանգստութիւն պահպանելու համար:

ԱՐԵՎԵԼՍԵՆ ԳՈՐԾԵՐ

Լրագրիների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները:

Շուվային ցոյց անելու համար եւրոպական նաւերի ներկայութիւնը Բազուկայի մէջ բաւական է, որ Ե. Պոլսի մէջ անհրաժեշտ համարեն չերնոօգորիական հարցի խաղաղութեամբ վերջացնելը: Բազուկայից եկած վերջին տեղեկութիւններից երևում է, որ Բիզա փաշա սկսել է իրագործել իր յանձնարարութիւնը: Նրա զօրքերը գրաւեցին ալբանիների թողած գիւղերը Դուլցինիոյ շուրջը և և երբ այս վերջինները կամեցան նորից դրաւել իրանց թողած գիւղերը, Բիզա-փաշայի զօրքերը ընդդիմացան և կրուի ժամանակ մի քանի ալբանիներին սպանեցին: Թիւրքաց զօրծակաւորը ուրիշ միջոցներ էլ է գործադրում: Նա հրաւիրեց իր մօտ Դուլցինիոյ անուանի բնակիչներին, համաձայն էր նրանց քաղաքը առանց կուի չերնոօգորիական յանձնել, խոստանալով, որ սուլթանը իր սեփական միջոցներից կը վճարի այն բոլոր ծախսերը, որ արել են ալբանիները քաղաքը ամրացնելու համար: Այս հանգամանքները ի նկատի ունենալով պետութիւնները յետաձգեցին ծախային ցոյցը:

Լօնդոնից ստացված լուրերից երևում է, որ Թիւրքիան Չերնոօգորիային Դուլցինիոյ նահանգը այնպէս չի յանձնի, ինչպէս պահանջում էին պետութիւնները:

«Pitt. Co. It. 27» լրագրից հաղորդեց, որ լիւնան Նիկոլայ հրաժարվել է Գլուխ և Գլխաւոր այն պայմանով, որ Բ. Կրանը ֆինանսաւոր յանձնի Չերնոօգորիային խաղաղութեամբ և պաշտօնապէս: Այս լուրը պէտք է զգուշութեամբ ընդունել մինչև որ նա հաստատովի ձիւտ աղբիւրներից: Հաւանական է միայն, որ չերնոօգորիական հարցը խաղաղութեամբ կը վերջանայ և միացեալ նաւատորմի ներկայութիւնը թիւրքաց ջրերի մէջ աւերող կը լինի:

Կ. Պոլսի մէջ գտնեալ յոյս ունեն, որ եթէ գործը այդպէս վերջանայ, ծովային ցոյցը անհրաժեշտ չի լինի: Այդ յոյսը չի կատարվի: Անգլիական թաղուհու գահական ճառից պարզ երևում է, որ միայն պետութիւնների համաձայնութեանց չէ սպասվում չերնոօգորիական հարցի լուծումը: Անգլիական կառավարութիւնը համոզված է, որ այդ համաձայնութիւնը պէտք է նպաստէ Բերլինի

դաշնադրի անկախութեան ֆինանսաւոր լուր պայմանների իրագործմանը: Պետութիւնները այսպիսով ստիպված կը լինեն իրանց նաւատորմը թիւրքաց ջրերի մօտ պահել, որպէս զի սպացուցանեն, թէ իրանք պատրաստ են համաձայնութեամբ գործել:

Չերնոօգորիայի հարցը վերջացնելուց յետոյ պետութիւնները առաջ կը բերեն յունական խնդիրը: Միացեալ նաւատորմը Բազուկայից կանցնի յունական ջրերը և կը ֆինանսանք մինչև Յունաստանը կը ստանայ իրան վիճակված նահանգները: Եթէ այս դէպքում էլ թիւրքաց կառավարութիւնը կը յետաձգէ գործը, պատճառ բերելով ալբանիների ընդդիմադրութիւնը, միացեալ նաւատորմը կը մտնի թիւրքաց ջրերը և կօչնի յունական ջրերին, որոնք արդէն պատրաստվում են դրաւել Յունաստանին վիճակված նահանգները: Սյ բոլոր գործերի համար ժամանակ է հարկաւոր: Արագ ոչինչ չի կատարվի: Այնուամենայնիւ անկարելի է մտածել, որ չերնոօգորիական խնդրի խաղաղութեամբ վերջանալու պատճառով, պետութիւնները չեն խառնվի յոյն-թիւրքական վիճի մէջ:

«Վիճազային ընկերութեան» հեռագրիներից մէկը հաղորդեց, որ 9000 ալբանիները գրաւեցին Դուլցինիո և որ Բիզա-փաշա չընդմանաւ նրանց, որովհետեւ թիւրքաց կառավարութիւնից պատերազմելու համար էր ստացել: Սրանից երևում է, որ չերնոօգորիական հարցն էլ այն դրութեան մէջ չէ, որ կարողանայ խաղաղութեամբ վերջանալ և որ միացեալ նաւատորմի ներկայութիւնը Բազուկայի մէջ դեռ ևս անհրաժեշտ է:

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Դաւիթ, 50 օգոստոսի

Հին-Նախիջվանից դուրս գալուցս յետոյ, իմ առաջին այցելած տեղն եղաւ Դաւիթ, որ Ստորապատական ամենապայծառ քաղաքն է: Ունի ընդարձակ և լաւ վաճառականութիւն, որը զիստաւորաբար հայերի և եւրոպացիների ձեռքն է: Այստեղ կայ մօտ 500 տուն հայ, որոց ամենի միջակին էլ շատ լաւ է քաղաքական ուղիւ տեղերի հետ: Ունեն երկու եկեղեցի, միւս Լիւթիմայում, միւսը Դաւիթ: Ունեն 4 ուսումնարան՝ երկուսը աղայոց, երկուսն օրիորդաց: Աղայերուց թիւը 250, իսկ օրիորդացը 40: Ուսումնարանները բաւական եկամուտ ունեն և կառավարվում են առանձին հոգաբարձութեան և մի անոնց զստոյութեան ներքոյ: Այդ է ասած, որ հոգաբարձութիւնը խիստ լաւ է ճանաչել իր պարտաւորութիւնը, և որը չէ խնայած ամեն ջանք և աշխատանք ի գործ դրելու իր ուսումնարանները նախաձեռնել որովհետեւ մէջ պահպանելու համար: Ունեն մի ընկերացարան 1874 թիւից հաստատված, ուր ստացվում են Կ. Պոլսից, Թիֆլիսից, և այլ տեղերից դասագրքն օգտակար գրեմք ու աղային լրագրիներ: Ունեն մի թատրոնական դահլիճ, ուր երբեմնակի ներկայացումներ են տալիս: Այստեղ նշանակում է փոքր ի շատէ կանաք, կայ երկտասարդութիւն, որը իր թարմ ուժերը միացրած գործում է անդուլ: Կայ և մի ամենապատուական քաշանայ տէր Մեղրիք Փառիպեանց, որը շատ լաւ է ճանաչել իր ժաւհ նպական բարձր կոչումը, և որը պարտաւոր է ճան խաղել գործող երկտասարդաց խմբին: Դաւիթի հասարակութիւնը տեղային թեմակալ սրբազան Մուշեղեանց խիստ բաւական է: Ծաղկողի ճամակրութիւնը ընդարձակ ապարդի է բաց առում սրբազանիս ազատ գործելու, և ուսումնարանները բարեկարգելու: Մահմադական չարաբարութիւնը դժբաղդաբար դեռ մեծ մասամբ անկրթ է:

Գ. Ս. Ս. Աղամանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳՈՒՅՈՒՆ ԲՆԿԱՌՈՒԹԵՆՑ

Ա. ՊԵՏԵՐՈՒԹԻ, 6 սեպտեմբեր: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 59 կ., երկրորդ 92 ր. 50 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր. 50 կ., ներքին 91 ր. 50 կ. տոմսին փոխառութեան տոմսակը արժէ 222 ր., երկրորդ 216 ր. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 50 կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 50 կ., ոսկի 7 ր. 96 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24.56 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 210 մարկ, ֆարդի վրա 260 շրանկ:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԻՈՐ ԱՐԾՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՍԵՑԻՔԻ ՆԱՅԵՑԻՔԵՐԻ ԶԱՐԲԱՅԻՔ

«Բրիտանիա» արձաթի մեծ գործարաններից մեկի նորերումն սնանկանալու պատճառով, նրանից ստանձված ապրանքները «Բրիտանիա» արձաթից, որ չեմքն անգամ գործարանական «խկական Բրիտանիա» զրօշմ ունեն, ծախվում են ամեն տեսակ զներով աւելի լաւ է ասել

Զ Ր Ի Ս Բ Ա Ր

Մ րուբէ ստանալուց յետոյ ուղարկում եմ իւրաքանչիւր ցանկացողին հետեւեալ աւարկաները նրանց գնի քաւորչի համար. 6 հատ գեղեցիկ սեղանի ԳԱՆԱԿՆԵՐ, կոթերը «Բրիտանիա» արձաթից, իսկ բերանները անգլիական իսկական պողպատից, 6 հատ գեղեցիկ ՊԱՏԱՌԱՔԱՆԵՐ «Բրիտանիա» արձաթի մի կողմից, 6 հատ սեղանի ԳՎԱԼՆԵՐ, 6 հատ կաթիկի ԳՎԱԼՆԵՐ, 6 հատ ԸՆՏԱՅ «Բրիտանիա» արձաթից, 1 հատ սուպի մեծ ԳՎԱԼ, 1 հատ կոթի գլալ, 6 հատ անգլիական ԱՄԱՆԱԿԱԼՆԵՐ, 1 հատ ԹԵՑԻ ՔԱՄԻՉ «ԲԻՏԱՆԻԱ» արձաթից, 1 հատ ԱՓՍԷ շաքար պահելու համար, 6 հատ գեղեցիկ ԹԱՍԵՐ ձուաների կամ օղիի համար, 1 հատ կաթիկի «Բրիտանիա» արձաթից, 1 հատ զամբիւլ կանաչիկի համար:

Ընդամենը 50 աւարկաներ, որոնք գեղեցիկ կերպով շինված են «Բրիտանիա» արձաթից և առաջ արժէին 70 րուբլ: Այդ արձաթը միակ մեաւ է, որ պահպանում է իր սպիտակութիւնը, այնպէս որ 25 ամաց գործածութենից յետոյ չի կարելի զանազանել իսկական արձաթից: Դորա համար ապահովում է: «Բրիտանիա» արձաթի անգլիական գործարանի գլխաւոր պահապար. Nulken B'ha (VI Windmihgasse № 25, Wi'n). իմ յայտարարութեան ձգտութեամբ իւր ապացուցանելու համար առաջ եմ բերում այն շնորհակալութիւնների և վերանորոգված պատուէրների մի մասը, որոնց ես ստացել եմ Պուստամանից և Լեհաստանից. Կանդլ Լալիթնոյի, Վորոնովսկոյի, մայոր Սոկոլովսկի, Վորոնովսկի, Ար. Բրիտանիայի, Պէրիշեյի, Կ. Կորեսկանի, Գորչին, Խմէշնիկի, Սոկոլովսկի, Ի. Պլիւսկի, Մեղչեանա և այլն: Բայց այդ Աւստրո-Ունգարիայից նոյնպէս ստացել եմ շնորհակալութիւններ: Որովհետեւ այդ աւարկանները մեծ քանակութեամբ են պահանջվում եւ պահանջները շուտով յայտնել: Պատուէրը տալու ժամանակ խնդրում եմ մաքուր և մեծ տաւերով գրել այն հասցէն, որով պէտք է ուղարկել: Մաքաւծարը և ճանապարհի ծախսը շատ անշան է և երեւի մի րուբլից աւելի չէ: Առեւտրական միւս տները յայտնած այս տեսակ ապրանքներից, սա ամենալաւն է:

2—6 (5 շաբ. օրերը)

«ՓԵՐՈՍ ՀԱՅԵՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդիսի ներկայ աւի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուէր բաժանորդաց: Այս տետրին մէջ տպագրուեցան տասն ազգային պատկեր, յորոց ութնը՝ նկարուած և փորագրուած են յատուկ մեր հանդիսի համար: Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան վարդապետ, Այվազեան արքեպիսկոպոս, Միքայէլ Միանսարեանց, Նուբար-Փաշա, Կարին բաղաբ, Պետրոսիկայ Հայոց եկեղեցին, Արձարան Հայոց 'ի Կարին, Սովեալ Հայ ընտանիք 'ի Վան, Վան բաղաբ, Կազմ Հայերէն աւետարանին, Նուիրեայ Նորին Կայսերական Մեծութեան 'ի Կաթողիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ աւի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են այսուհետեւ իւրաքանչիւր տետրի համար 1 ր. 50 կ:

Տփլիսում ստանալ կարելի է պ. Ջ. Գրիգորեանցի և Կենդրոնական գրաւաճառանոցներում:

Հրատարակիչ Զարմայր Մ. Մսերեանց

Հայոց պատմութիւնը իսկական աղբիւրներից ուսումնասիրելու համար կարեւոր մի գիրք է «Հիւսուածք բանից նախնի պատմադրաց հայոց» 3 հատոր, աշխատաւ Կ. Կոստանեանցի:

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է:

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարեւոր ծանոթութիւններ. ժամանակագրական աղեւտակներ և յաւելածներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ր.

ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

բ. և գ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

Ազգային դպրոցների համար 10 օրինակից աւել առնողին 10% զեղուքն կը դրուէ. գնելու համար դիմել—Ալեքսանդրապոլ—Ցիլիսի աւաղ քահանայ Կոստանեանցին.

Տփլիս—Կենդրոնական գրաւաճառանոց:

Սոսկվա—Հայոց եկեղեցու երեցիփոխան պ. Մեղան Փանեանցին:

8—10

ՎԱՐԴԱՎԱԿԱՍԵԱՆ ՕՂԻԻ գործարանի պահեստ թիֆլիսում ՇԱՌԻ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվեցին ծախվել ամենալաւ մաքրված ՕՂԻՆԵՐ հետեւեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՁԻ և ԲՈՒՄԵՐԻՆԳ: Երբ շաբաթ արժէ 45 կ., առանց աւանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., Կ., ամեն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշան աւուր զիջուքն է անվում: Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օդնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՅՐԱՔԱՎԱՐԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չեն: Պ. պ. գնողներ ռւշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիները պահեստը դանվում է Միքայէլեան կամուրջի վրա, Յնարարայա հիւրանոցի տակ, Լիխտախակու տանը, Վորոնովսկի արձանի դիմացը: 5—8 (2 շաբ.)

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՄՆԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՌԱՊՈՏԵԱՆ ԳՆԻՑ ՄԻՆՁՆԻ 1 ժԱՄԱՆ

Երկուշաբթի. Գաւրօնսկի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեւի և Գորաւիվիչ ներքին հ., Բիււրեանց խրուրդիական և աւքերի հ., Շաւեւրօրսկի վներական և կաշու հ.:

Երեքշաբթի. Միսկիվիչ Խիւրուրդիական հ. Միւրօշնիչէնկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեւի ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.:

Չորեքշաբթի Լիսիցեւի ներքին հ., Շաւեւրօրսկի վներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Գաւրօնսկի մանկաբարձական և կանանց հ., Միւրօշնիչէնկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեւի ներքին հ., Բիււրեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:


Ուրբաթ. Միսկիվիչ Խիւրուրդիական հ., Լիսիցեւի ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շաւեւրօրսկի և Աստուածատուրով ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեւի ներքին հ.:


Առաջնաբայթ Օրբիստ աղքատ հիւանդանոցին բժշկանոցի տոմսակով ընդունում է իր տանը ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կերակրի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի գիրեկօր Լիսիցեւի:



Կ. ՊԵՆՏԵՐ ԵՏԱՄԵՆՆԵՐ ՍԿԵՆ ՓՈՂՈՑ տուն ԶՈՒԲԵԼՕՎԻ: Եկող ձեռնարկ սեղծի համար առաջարկում եմ պատուէրի հասա-



րակութեանը ՄԵՃ՝ ԲԵՆԵԿՈՒԹԵԼԱՐԻ ՁԵՌԻՒ և ՈՏԻԻ կարի ՄԵՔԵՆԵՆԵՐ, եւրօպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԿՆԵՐԻՑ, ամենանոր ՁԵՒԵՐԻ, չափազանց ԼԺՄԵ գնելով, այսինքն: Ձեռքի մեքենաներ 12—45 րուբլ: Ուրբի 50—80 րուբլ:

1—25